ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԿԱՊԻՏԱԼ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ N 18/10-Ա/1

ք. Երևան «5» դեկտեմբերի 2022 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար Գ. Սաֆարյանի (այսուհետ պետական մարմին), որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Երևանի Տ. Շևչենկոյի անվան N 42 ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ կազմակերպություն), ի դեմս տնօրեն Է. Թումանյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին կողմեր), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2022 թվականի նոյեմբերի 24-ի N 1818-Ն որոշումը (այսուհետ որոշում), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ պայմանագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է «Երևանի Տ. Շևչենկոյի անվան N 42 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ին անհրաժեշտ գույքի ձեռքբերման համար «Երևանի Տ. Շևչենկոյի անվան N 42 ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանը տրամադրել՝ **63,972,100.0** (վաթսուն երեք միլիոն ինը հարյուր յոթանասուներկու հազար մեկ հարյուր) ՀՀ դրամ գումար, իսկ կազմակերպությունը պարտավորվում է միջոցառումն իրականացնել որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող հավելված 1-ում, իսկ ձեռքբերվող գույքի նախահաշիվը՝ հավելված 2-ում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (պարբերաբար), առանց որևէ սահմանափակումների, ստուգել կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 5.1-ին կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.4. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.1.5. Պայմանագրի 2.4.4-րդ ենթակետով սահմանված ժամկետում կազմակերպությունից պահանջել ներկայացնել նույն ենթակետով նախատեսված հաշվետվությունը,

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել կազմակերպությանը.

2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. իրականացնել ծրագրի շրջանակներում նախարարության կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության դրույթներին համապատասխան հաշվառում.

2.4.2. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.3. կատարել նախարարության կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. գնման պայմանագիրը կնքելուց հետո 10-օրյա ժամկետում Պետական մարմին ներկայացնել գնման պայմանագրի պատճենը, իսկ միջոցառումների ավարտից հետո սույն Պայմանագրի 6.1. կետով սահմանված ժամկետում Պետական մարմին ներկայացնել ֆինանսական և բովանդակային հաշվետվություն՝ իր կողմից իրականացված ծախսերի և կատարված միջոցառման մասին (նախահաշվի ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ

փաստաթղթերը գտնվում են Կազմակերպության մոտ, վերջինս պատասխանատվություն է կրում հաշվետվությամբ ներկայացված տվյալների հավաստիության համար):

2.4.5. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու նախարարության հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.6. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» օրենքով սահմանված գնման մրցակցային ձևով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան՝ ապահովելով ՀՀ կառավարության 2022 թվականի նոյեմբերի 24-ի N1810-Ն որոշման 3-րդ կետով սահմանված պահանջը.

2.4.7. չծախսված գումարի վերջնական, տարեվերջյան մնացորդը (տնտեսումները, խնայողությունները) վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե ոչ ուշ, քան մինչև սույն Պայմանագրով նախատեսված հաշվետվությունների (ֆինանսական և բովանդակային) ընդունմանը հաջորդող 15-րդ աշխատանքային օրը:

3. Մոնիթորինգը

3.1. Պետական մարմինը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է Պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Վճարման կարգը և ժամկետները

4.1. Նախարարությունը՝ սույն պայմանագրի 1.1 կետում նշված գումարը կազմակերպությանը տրամադրում է համաձայն ՀՀ կառավարության 2022 թվականի նոյեմբերի 24-ի N 1810-Ն որոշմամբ նախատեսված եռամսյակային համամասնություններին համապատասխան:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Սույն պայմանագրով և ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում կազմակերպությունը պարտավորվում է Պետական մարմնին փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 0.5 տոկոսի չափով: Տուգանքը հաշվարկվում է նաև Պայմանագիրը դրանով սահմանված ժամկետներում կատարելու, սակայն Պետական մարմնի կողմից չընդունվելու դեպքում: Ընդ որում, տուգանքի վճարումը կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից:

5.2. Պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված միջոցառումների համար պայմանագրով սահմանված ժամկետները Կազմակերպության կողմից չպահպանելու դեպքում վերջինս Պետական մարմնին վճարում է տույժ՝ հանձնման ենթակա, սակայն չհանձնված աշխատանքների արժեքի 0.05 (հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար:

5.3. Պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում Կազմակերպությունը Պետական մարմնին վճարում է տույժ՝ պայմանագրի գնի 0.15 (տասնհինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար:

5.4. Պետական մարմինը 5.1., 5.2. և 5.3. կետերով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

6. Պայմանագրի գործողության ժամկետը

6.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը: Պայմանագրով նախատեսված միջոցառումների կատարման ժամկետը մինչև 2023թ. սեպտեմբերի 1-ն է, իսկ հաշվետվությունների ներկայացման ժամկետը՝ մինչև Պայմանագրով նախատեսված միջոցառումների կատարման ավարտին հաջորդող 30-րդ օրացուցային օրը, սակայն ոչ ուշ, քան 2023 թվականի դեկտեմբերի 10-ը:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, նախարարությունների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե

անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

8.2. Պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

8.3. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պետական մարմին	**Կազմակերպություն**
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«Երևանի Տ. Շևչենկոյի անվան N 42 ավագ դպրոց» ՊՈԱԿ
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն N 2	ք. Երևան, Մաշտոցի 5/2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011038461	Հ/Հ 900018002288
ՀՎՀՀ 02698732	ՀՎՀՀ 02527856
Գլխավոր քարտուղար՝	Տնօրեն՝
Գ. Սաֆարյան	Է. Թումանյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Հավելված 1
2022 թ. դեկտեմբերի 5 -ին
կնքված N ... պայմանագրի

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

NN ը/կ	Իրականացվելիք միջոցառումներ					
	անվանումը	**համառոտ բովանդակությունը**	**կատարման ենթակա գործառույթների նկարագիրը**	**ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները**	**վերջնա-ժամկետը**	**պահանջվող գումարը (դրամ)**
1	Հանրակրթական դպրոցների գույքով և տեխնիկայով ապահովում	«Երևանի Տ. Շևչենկոյի անվան N 42 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի համար անհրաժեշտ գույքի ձեռքբերում՝ համաձայն հավելված 2-ով հաստատված նախահաշվի	Գույքը ձեռք է բերվում «Գնումների մասին» օրենքով սահմանված կարգով և ՀՀ կառավարության 2022 թվականի նոյեմբերի 24-ի N 1810-Ա որոշման 3-րդ կետին համապատասխան՝ գնման մրցակցային ձևով	Նոր գույքով ապահովված դպրոց	01.09.2023թ.	63 972 100
		Ընդամենը՝				**63 972 100**

Պետական մարմին

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3,
Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011038461
ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղար՝

Գ. Սաֆարյան
(ստորագրություն)
Կ.Տ

Կազմակերպություն

«Երևանի Տ. Շևչենկոյի անվան N 42 ավագ դպրոց» ՊՈԱԿ
ք. Երևան, Մաշտոցի 5/2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900018002288
ՀՎՀՀ 02527856
Տնօրեն՝

Է. Թումանյան
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված 2

2022 թ. դեկտեմբերի 5-ին

կնքված N 1810-8/1 պայմանագրի

«Երևանի Տ. Շևչենկոյի անվան N 42 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի համար անհրաժեշտ ձեռքբերվող գույքի նախահաշիվ

Անվանացանկ	Տեխնիկական բնութագիր	Գույքի պահանջվող ցանկը	Գույքի համար նախատեսված գումարը, << դրամ
	Դասասենյակներ		**20,140,000**
Սեղան աշակերտական,բարձրության կարգավորմամբ՝ 5-12-րդ դասարանների համար	Աշակերտական սեղան՝ երկտեղանոց, մետաղական հիմքով, երկու կողմերում մետաղական կախիչներով, գույները և չափերը՝ Առողջապահության նախարարության 28.03.2017թ. 12-Ն հրամանի և ԳՈՍ 11015-93 համապատասխան 1200 x 600 x (h) 640 մմ-760 մմ	165	9,900,000
Աթոռ աշակերտական՝ 5-12-րդ դասարանների համար	Աշակերտական աթոռ՝ մետաղական հիմքով, նստատեղը և թիկունքը՝ նրբատախտակից, գույները և չափերը՝ Առողջապահության նախարարության 28.03.2017թ. 12-Ն հրամանի և ԳՈՍ 11015-93 համապատասխան 375 x410 x 380 x 460 մմ	330	5,940,000
Ուսուցչի սեղան.	Սեղանի աշխատանքային հարթության համար պետք է օգտագործվի լամինացված ՓՏՍ 18 մմ հաստությունից ոչ պակաս: Աշխատանքային հարթության եզրագծերը պետք է շրջափակվեն 2 մմ հաստության պլաստիկե եզրակալով (PVC), ոչ աշխատանքային հարթության եզրագծերը պետք է շրջափակվեն 0.4 մմ հաստության պլաստիկե եզրակալով (PVC): Սեղանի աջ կամ ձախ կողմերում պետք է ունենա դարակ: Դարակի առջևի մասը պետք է պատրաստված լինի նույն նյութից որից պատրաստված է սեղանի աշխատանքային հարթությունը: Դարակի ներսի համար օգտագործված նյութը պետք է առաջարկվի մատակարարի կամ արտադրողի կողմից: Դարակը պետք է ունենա օվալաձև մետաղական բռնակ: Միացումներն	10	1,000,000

	իրականացնել թաքնված ձգանների միջոցով 1200 x 600 x 760 մմ		
Գրապահարան	Գրապահարան (ՈՒսուցչանոցի գրապահարան) Գրապահարանը պետք է պատրաստված լինի լամինացված ՓՏՍ-ից: Երկու կողմերի ներքևի դարակների և առջևի դռների հաստությունը պետք է լինի ոչ պակաս 18 մմ-ից, դարակները պետք է լինի ոչ պակաս 18 մմ հաստությամբ, իսկ հետևի պատինը՝ ոչ պակաս 2 մմ հաստությամբ: Եզրագծերը պետք է շրջափակվեն 0,4 մմ հաստության պլաստիկե եզրակալով (PVC): Գրապահարանը պետք է վերևում ունենա երեք բաց դարակ: Ներքևի դարակները պետք է փակվեն դռներով, որոնց վրա ամրացված են օվալաձև մետաղյա բռնակներ: Միացումներն իրականացնել թաքնված ձգանների միջոցով: 810x 440 x 2100 մմ	5	300,000
Գրատախտակ	Գրատախտակի մակերևույթը կանաչ գույնի, հակաարտացոլման ռեֆլեկտիվ պոլիմերային ծածկույթով: Գրատախտակի հաստությունը ոչ պակաս 10մմ, եզրապարված Ո-աձև ալյումինե պրոֆիլներով: Անկյունները ամրացված լինեն պաշտպանիչ պլաստիկ անկյունակներով և լրացուցիչ ամրապնդված պտուտակներով: Գրատախտակի երկարությամբ տեղադրված լինի ալյումինե պրոֆիլից դարակ. կավճի համար: Գրատախտակը պետք է կոմպլեկտավորվի ամրացման համար բոլոր անհրաժեշտ պարագաներով: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով ցանկացած հղման դեպքում կիրառել «կամ համարժեք» բառերը Չափսերը՝ 1500x550 x 2000մմ	5	500,000
Գրատախտակ՝ ծալվող	Գրատախտակ (Գրատախտակ ծալվող 3000x1000մմ) Գրատախտակի աշխատանքային հարթությունը, որի չափերն են՝ 1.0 մ x 3.0 մ (0,75մ+1,5մ+0,75մ), պետք է լինի ծալվող փեղկերով (փեղկերի հետևի մասում նույնպես գրատախտակ), ունենա մագնիսական հատկություն և հակաարտացոլման պոլիմերային ծածկույթ: Գրատախտակի եզրագծերը պետք է պատրաստված լինեն ալյումինե պրոֆիլներով, իսկ անկյուններում պետք է տեղադրված լինեն պլաստիկ անկյունակներ: Փեղկերի միացումը հիմնական գրատախտակին պետք է կատարվի ծխնիների միջոցով: Ներքևի հատվածում պետք է տեղադրված լինի ալյումինե դարակ՝ նախատեսված կավիճի համար:Գրատախտակի միջուկը պետք է լինի, պատին ամրացվող մասում՝ միջին խտության փայտաթելային սալից (ՄԴՖ), իսկ բացվող փեղկեր՝ ստվարաթղթե հիմքով թեթև նյութից: Գրատախտակը պետք է ունենա պատից ամրացման համար բոլոր անհրաժեշտ պարագաները: 1270x 260 x 760մմ	5	750,000
Կավճամագնիսային,մարկերային գրատախտակ երեքփեղկանի,	1500x1000մմ (2 փեղկ L x750 x1000) Մագնիսային՝ կավճային 5 հարթությամբ, չափսը՝ (L) 3000 x (H) 1000 մմ:Գույնը՝ կանաչ, բաղկացած 4		650,000

կարճապահարանով	հատ շառնիրային պետլյաներով (ծխնիներ) իրար ամրացված 3 էլեմենտից՝ 180 աստիճան պտտման հնարավորությամբ, եզրակալված ալյումինե պրոֆիլով:	5	
Աթոռ կիսափափուկ աշխատանքային	Աթոռները պետք է լինեն կիսափափուկ, նստատեղը սպունգե՝ պաստառապատված փափուկ դիմացկուն գործվածքով, աթոռի կմախքը՝ փայտյա և լաքապատված: 450 x 450 x 740 մմ	50	1,000,000
Կախիչ	Կախիչ, լամինացված ԴՍՊ 1,8 հաստությամբ, 7 տեղանոց մետաղական կախիչներով, 700x 250x 250մմ չափերի, պատից ամրացվող, գույնը՝ բնափայտի:	5	100,000
	Հանդիսությունների դահլիճ		**120,000**
Ամբիոն	Լամինացված ԴՍՊ 1,8 հաստությամբ, օգտագործվող մակերեսը՝ 45 աստիճան թեքությամբ, բաժակ տեղադրելու հարմարանքով: Եզրագծերը պետք է շրջափակվեն 2 մմ հաստության պլաստիկ եզրակալով (PVC) : Չափերը՝ 600 x 500 x 1200 մմ	2	120,000
	Տնօրենի աշխատասենյակ		**1,276,000**
Բազկաթոռ աշխատանքային պտտվող	Շարժական բազկաթոռ հինգ անվակների վրա՝ միմյանց կապակցված հինգ թևանի խաչուկով: Խաչուկը՝ քրոմապատ մետաղից, բռնակները մետաղից կամ պլաստմասայից, վերև-ներքև կարգավորվող նստոցով: Նստատեղը և թիկնակը՝ փափուկ՝ 80մմ-ից ոչ պակաս սպունգի հաստությամբ և 33% խտությամբ, պաստառապատված սև բարձրորակ արհեստական կաշվով: Նստոցի չափերը /60x60/սմ-ից ոչ պակաս, թիկնակի բարձրությունը 75սմ-ից ոչ պակաս,ետ-առաջ կարգավորվող և ֆիքսվող: 140կգ բեռնվածության համար: 550x 560 x 750 մմ	5	750,000
Աթոռ կիսափափուկ՝ աշխատանքային	Չափսը՝ 460 (L) x460 (B) x 470(h) x 910(H): Կարկասը՝ d=25մմ x 2 մմ (պատի հաստություն) կլոր կտրվածքի կայուն փոշեներկված մետաղե խողովակից: Ոտքերին պլաստիկ խցաններ պոլիէթիլենից՝ պատերի հաստ. 2 մմ, տակը՝ 4 մմ, նստատեղը և հենամասը կիսափափուկ՝ պատրաստված ճկվող ֆաներայից, պորոլոնից՝ երեսապատված կտորե գործվածքով, գույնը՝ մոխրագույն: 450 x 450 x 740 մմ	6	108,000
Սեղան խորհրդակցությունների համար	Խորհրդակցության սեղանի հարթության համար պետք է օգտագործվի լամինացված ՓSU 18 մմ հաստությունից ոչ պակաս: Աշխատանքային հարթության եզրագծերը պետք է շրջափակվեն 2 մմ հաստության պլաստիկ եզրակալով (PVC), ոչ աշխատանքային հարթության եզրագծերը պետք է շրջափակվեն 0.4 մմ հաստության պլաստիկ եզրակալով (PVC): Ոտքերը պատրաստված լամինացված ՓSU 18 մմ հաստությունից ոչ պակաս շրջափակված 2 մմ հաստությունից ոչ պակաս զրակալով: Ոտքերը միմյանց կապվում են 250 մմ լայնությամբ միջնապատով:	2	300,000

	2400 x 650 x 760 մմ		
Գրապահարան	Պահարան գրասենյակային, լամինատե, բարձրությունը՝ 2մ, լայնությունը՝ 1մ, իսկ դարակների խորությունը՝ 450մմ: Լամինատի հաստությունը ոչ պակաս քան 18մմ:	1	60,000
Զգեստապահարան	Պահարան արտահագուստի համար, լամինացված ԴՍՊ 1,8 հաստությամբ, 810x 440 x 2100 մմ չափերի, երկդռնանի, վերևից 30սմ 1 հորիզոնական միջնապատով, ներսում ¾ դյույմ մետաղական երկաթյա ձող, որպես կախիչ ծառալելու համար, գույնը՝ բնափայտի: 810x 440 x 2100 մմ	1	58,000
	Ուսուցչանոց		**668,000**
Աշխատանքային սեղաններ	Աշխատանքային սեղան, չափերը՝ 760մմx600մմx1100մմ, աջ կողմից 2 կողպվող դարակներով, աշխատանքային մակերեսը ՓՏՍ-ից գույնը՝ բնափայտի, հաստությունը 18մմ	5	400,000
Սեղան խորհրդակցությունների համար	Խորհրդակցության սեղանի հարթության համար պետք է օգտագործվի լամինացված ՓՏՍ՝ 18 մմ հաստությունից ոչ պակաս: Աշխատանքային հարթության եզրագծերը պետք է շրջափակվեն 2 մմ հաստության պլաստիկ եզրակալով (PVC), ոչ աշխատանքային հարթության եզրագծերը պետք է շրջափակվեն 0.4 մմ հաստության պլաստիկ եզրակալով (PVC): Ոտքերը պատրաստված լամինացված ՓՏՍ 18 մմ հաստությունից ոչ պակաս շրջափակված 2 մմ հաստությունից եզրակալով: Ոտքերը միմյանց կապվում են 250 մմ լայնությամբ միջնապատով; 2400 x 650 x 760	1	150,000
Գրապահարան	Պահարան գրասենյակային, լամինատե, բարձրությունը՝ 2մ, լայնությունը՝ 1մ, իսկ դարակների խորությունը՝ 450մմ: Լամինատի հաստությունը ոչ պակաս քան 18մմ:	1	60,000
Զգեստապահարան	Պահարան արտահագուստի համար, լամինացված՝ ԴՍՊ 1,8 հաստությամբ, 810x 440 x 2100 մմ չափերի, երկդռնանի, վերևից 30սմ 1 հորիզոնական միջնապատով, ներսում ¾ դյույմ մետաղական երկաթյա ձող՝ որպես կախիչ ծառալելու համար, գույնը՝ բնափայտի	1	58,000
	Գրադարան		**3,065,000**
Սեկցիա-ստելաժ	Մետաղական կմախքով, դարակների բարձրությունը փոփոխման հնարավորությամբ, դարակների ծանրաբեռնվածությունը ոչ պակաս քան 15 կգ: Չափսերը՝ 886x 438 x 1824 մմ	10	1,100,000
Ամսագրերի սեղան	Սեղանի հարթության համար պետք է օգտագործվի լամինացված ՓՏՍ՝ 18 մմ հաստությունից ոչ պակաս: Աշխատանքային հարթության եզրագծերը պետք է շրջափակվեն 2 մմ հաստության պլաստիկ եզրակալով (PVC), ոչ աշխատանքային հարթության եզրագծերը պետք է շրջափակվեն 0.4 մմ հաստության պլաստիկ եզրակալով (PVC): Ոտքերը պատրաստված լամինացված ՓՏՍ-ից՝ 18 մմ հաստությունից ոչ պակաս՝ շրջափակված 2 մմ	5	225,000

	հաստությունից եզրակալով: Ոտքերը միմյանց կապվում են 250 մմ լայնությամբ միջնապատով, 900 x 500 x 450 մմ		
Գրատախտակ շարժական	Ֆլիպչարտ գրատախտակ՝ մարկերային, շարժական ոտքերով: Չափսերը՝500x550 x 2000մմ	2	200,000
Ուսումնացուցադրական ձեռնարկի պահարան	Ուսումնա-ցուցադրական ձեռնարկի պահարան՝ լամինացված ՓՏՍ 18 մմ հաստությունից ոչ պակաս բարձրությունը՝ 2մ, լայնությունը՝ 1մ, իսկ դարակների խորությունը՝ 450մմ:Դռները ապակյա թափանցիկ բարձրությունը 1300 մմ; Ներքևի դարակները բարձրությունը 700 մմ պետք է փակվեն ՓՏՍ 18 մմ հաստությունից ոչ պակաս դռներով, որոնց վրա ամրացված են օվալաձև մետաղյա բռնակներ: Միացումներն իրականացնել թաքնված ձգանների միջոցով:	3	240,000
Փակ դռներով ստորին սեկցիա՝տեղափոխ. դարակներով	Փակ դռներով ստորին սեկցիա՝ տեղափոխ. դարակներով: Լամինացված ԴՍՊ 18 մմ հաստությամբ: Չափսերը՝ 886x 438 x 912 մմ	5	650,000
Փակ դռներով ստորին և վերին սեկցիա՝ տեղափոխ. դարակներով	Փակ դռներով ստորին և վերին սեկցիա՝ տեղափոխ. Դարակներով: Լամինացված ԴՍՊ 18 մմ հաստությամբ: Չափսերը՝ 886x 438 x 1824 մմ	3	390,000
Քարտեզների համար սեկցիա	Քարտեզների համար սեկցիա, լամինացված՝ ԴՍՊ 18 մմ հաստությամբ, չափսերը՝ 886x 438 x 1824 մմ	2	260,000
	ՄԱՐԶԱԳՈՒՅՔ		**7,462,000**
Բարձրացատկի կանգնակ	Մետաղական հիմքով, բարձրացվող իջեցվող համակարգով, ցուցիչներով, 4,5-5մ հատուկ նյութից պատրաստված ձողով, որը համապատասխանում է միջազգային չափորոշիչներին	4	648,000
Ներքնակ	Լայնությունը՝ 1մ, երկարությունը՝ 2մ., բարձրությունը՝ 5սմ., սպունգի խտությունը՝ 140 մետր խորանարդ, գույնը՝ կապույտ, ծածկույթը պատրաստված է կաշվին փոխարինող որակյալ հումքից, հատուկ խտացված սինտիպոնե ամբողջական մեկ միջուկով	3	90,000
Կամրջակ	Փայտյա հիմքով, կորաձև պատրաստված զսպանակներով: Դիմային հատվածը՝ հատուկ մանրաթելերից պատրաստված ծածկույթով	4	584,000
Շվեդական պատ	Փայտյա, 10 կիսակլոր աստիճաններով, վերին մասը հարմարեցված՝ որպես պտտաձող օգտագործելու համար, բարձրությունը՝ 2.5մ, լայնությունը՝ 85սմ, կողային հատվածների խորությունը 13սմ, թույլ լաքապատ	2	140,000
Մարմնամարզական այծիկ	Մետաղական հիմքով, բարձրացվող և իջեցվող համակարգով, փայտյա պատվանդանով երեսպատված կաշվին փոխարինող բարձրակարգ հումքով, սինտիպոնե հատուկ միջուկով: Բարձրությունը՝ 93սմ, երկարությունը՝ 60սմ, լայնությունը՝ 37սմ	4	280,000
Վոլեյբոլի կանգնակ ցանցով	Մետաղական հիմքով, բարձրացվող իջեցվող համակարգով, ճոպաններով, ցանցը՝ ամրացվող հատվածներով, ֆիքսվող Ցանցի բարձրությունը 1մ երկարությունը 9.5, գույնը սև կամ սպիտակ: Գործվածքի թելի հաստությունը	2զույգ	450,000

	3-4 մմ: Վերին եզրը 5 սմ լայնքով սպիտակ գույնի կտոր կարված ամբողջ երկանքով: Վերին ժապավենի միջով անցկացված 2-4մմ հաստությամբ առնվազն 12մ երկարությամբ մետաղյա տոռսով: Ստորին եզրը 3-5 սմ լայնքով սպիտակ ժապավենով և անկյուններում ձգելու համար նախատեսված 70-90 սմ երկարությամբ պարանով, գործվացքը 10 սմ քառակուսի անցքերով: Փաթեթավորումը պոլիեթիլենային տոպրակների կամ ստավարաթղթե արկղերի մեջ		
Բաստկեբոլի վահանակ օղակով	Բասկետբոլի մրցումային վահան, 180X105սմ: Մրցումային և մարզումային չափորոշիչներին համապատասխան: Հումքը՝ օրգանական ապակի(оргстекло) հաստությունը՝ 1.2-2սմ, վահանակը՝ եզրագծված ալյումինե շրջանակով, առկա են օղակները և ցանցերը՝ զույգով	4զույգ	500,000
Մարմնամարզական նստարան	Փայտյա հիմքով. երեք փայտյա ոտքերով, թույլ լաքապատ, Երկարությունը՝ 3 մետր, լայնքը 20-21 սմ, դահլիճային չափորոշիչներին համապատասխան.	6	360,000
Ֆուտբոլի դարպաս՝ ցանցով	Մետաղական հիմքով, մակարդակը պրոֆեսիոնալ: Չափսերը՝ 2x3 մետր: Խորությունը 1-1.5մետր, քանդվող-հավաքվող համակարգով:	2զույգ	940,000
Պտտաձող	Մետաղական հիմքով, 1000 աստիճան եփված մետաղից պատրաստված ձողով: Գետնին ամրացնելու հարմարանքով, ձգման շղթաներով, բարձրացվող իջեցվող համակարգով:	2	3,400,000
Մագլցման պարան	Բամբակի և կապրոնի համակցությունից, 4.5 սմ տրամագծով, 4.5 մ երկարությամբ, վերին մասում առաստաղին երկաթե ամրացվող հարմարանքով, մարզումային ստանդարտներին համապատասխան: Jenian ֆիրմայի կամ համարժեք: Պատվիրատուի պահանջի դեպքում մատակարարը պարտավոր է ներկայացնել արտադրողի կողմից որակական չափանիշների մասին փաստաթուղթ:	2	70,000
	Լաբորատոր սենյակ		**692,000**
Ուսուցչի սեղան	Չափսերը՝ (L) 1200 x (H) 600 x (B) 760 մմպատրաստված 16 մմ հաստությամբ լամինացված Ե-1 դասի ԴՍՊ-ից՝ եզրակալված 2 մմ հաստությամբ ՊՎՔ երիզով, առանձին շարժվող տումբայով՝ անիվների վրա, երեք դարակաշարով, միասնական փականով և բռնակներով:Չափսերը՝ (L) 450 x (B) 550 x (H) 650 մմ	1	100,000
Ուսուցչի աթոռ	Ուսուցչի աթոռ Չափսը՝ 460 (L) x460 (B) x 470(h) x 910(H): Կարկասը՝ d=25մմ x 2 մմ (պատի հաստություն) կլոր կտրվածքի կայուն փոշեներկված մետաղե խողովակից: Ոտքերին պլաստմասե խցաններ պոլիէթիլենից՝ պատերի հաստ. 2 մմ, տակը՝ 4 մմ, նստատեղը և հենամասը կիսափափուկ՝ պատրաստված ճկվող	1	18,000

	ֆաներայից, պորոլոնից՝ երեսապատված կտորե գործվածքով:		
Աշակերտական աթոռ	Չափսը՝ 380(L)x380(B)x460(h)x825(H):Նստատեղը՝ 380(L)x380(B)մմ չափսերի, փոսիկով, դիմացը կորացված 9 մմ հաստությամբ լաքապատ նրբատախտակից: Հենամասը՝ 380(L)x170(B)մմ չափսերի 8մմ հաստությամբ լաքապատ ճկված նրբատախտակից:Կարկասը՝ d=25 մմ x 2 մմ (պատի հաստություն) չափսի կլոր կտրվածքի մետաղե կայուն փոշեներկված խողովակից: Ոտքերին պլաստմասե խցաններ պոլիէթիլենից՝ պատերի հաստ. 2 մմ, տակը՝ 4 մմ:	8	144,000
յութերի պահեստավորման համար նախատեսված (փակ դռներով) պահարան	Պահարան (փակ դռներով) Չափսը՝ 850 x 450 x 1850 մմ, պատրաստված 16 մմ հաստությամբ լամինացված Ե-1 դասի ԴՍՊ-ից՝ եզրակալված 2 մմ հաստությամբ ՊՎՔ երիզով: Դռների պետյաները (ծխնիներ)՝ մագնիսական ֆիքսացվող, պահարանի ներսում դարակաշար 5 հատ՝ չափսերը 400 x 800 մմ լամինացված ԴՍՊ–ից՝ եզրակալված 2մմ հաստությամբ ՊՎՔ երիզով:	2	280,000
Սարքավորումների տեղադրման համար նախատեսված (բաց դարակներով) պահարան	Պահարան ապակիներով Չափսը՝ 850 x 450 x 1850 մմ պատրաստված 16 մմ հաստությամբ լամինացված Ե-1 դասի ԴՍՊ-ից՝ եզրակալված 2 մմ հաստությամբ ՊՎՔ երիզով: Դռների պետյաները (ծխնիներ) մագնիսական ֆիքսացվող, պահարանի ներսում դարակաշար 2 հատ՝ չափսերը 400 x 800 մմ լամինացված ԴՍՊ –ից՝ եզրակալված 2 մմ հաստությամբ ՊՎՔ երիզով, 2 հատ ապակե դռներ՝ 5 մմ հաստությամբ ապակիով:	1	150,000
	1. ՀԱՄԱԿԱՐԳԻՉ 1 (All-in-one)	**30**	**12,000,000**
	Համակարգիչ ամբողջը մեկում՝ (Մոնոբլոկ)՝ առնվազն Դիսփլեյ՝ 54.61 սմ անկյունագիծ (21.5") diagonal FHD(1920x1080) Led կամ anti-glare էկրան: Հզորությունը՝ ոչ ավել 75Վտ արտաքին սնուցման աղբյուր: Պրոցեսորը՝ intel i3 առնվազն 11 սերունդ: միջուկների քանակը՝ ոչ պակաս 4, հոսքերի քանակը ոչ պակաս 8, բազային հաճախականությունը ՝ առնվազն 2,1 Գհց, մաքսիմալ 4,4Գհց, Քեշ		

	հիշողությունը՝ առնվազն 4մբ: Տեսաքարտը՝ ներկառուցված, ոչ պակաս Intel® UHD Graphics, տեղադրված օպերատիվ հիշողության սարքը ոչ պակաս 8 Գբ, DDR4-2666 SDRAM Standard memory note: Transfer rates up to 2666 հաճախականությամբ: Մայրական սալիկի վրա ոչ պակաս, քան 2 հատ հիշողության սարքի համար նախատեսված մուտք 2 հատ SODIMM: Կոշտ սկավառակ՝ ոչ պակաս, 1TB առնվազն 5400 rpm SATA HDD կամ SSD 256GB PCI nVme: Ներկառուցված ձայնային քարտ RJ45 Ethernet high performance internal speaker, combo microphone/headphone jack, line-in and line-out rear ports (3.5 mm): Կոմունիկացիա՝ Wi-Fi 802.11ac: Վեբ տեսախցիկ՝ FHD webcam առնվազն 5mp with integrated dual array digital microphone, maximum resolution of 1920x1080: Մուտքեր՝ և միացումներ 1 HDMI-out; 1 headphone/microphone combo; 1 power connector; 1 RJ-45; առնվազն 2 հատ USB 2.0; և 2 հատ USB 3.1: Հոսանքի լար, խրոցը երկբևեռ: Ստեղնաշարը գործարանային անգլերեն և ռուսերեն տառատեսակներով, մկնիկը օպտիկական: Համակարգիչը, ստեղնաշարը, մկնիկը՝ միևնույն արտադրողից, ներառված գործարանային լրակազմի մեջ: Կոմպլեկտավորումը և փաթեթավորումը գործարանային:		
	2. UPS	**30**	**1,500,000**
	Այո Անխափան սնուցման աղբյուրներ՝ Հզորությունը՝ նվազագույնը՝650-1500VA, 510W, line interactive, ավտոմատ լարման կարգավորում AVR, Crest factor 3:1, Անցման ժամանակը՝ ≤ 10ms, Հզորության գործակիցը PF = 0.6 (երբ մուտքային տիրույթը -35% - 23%, PF = 0.45), միացումները՝ 2 x Universal (Multi-type) տիպի մարտկոցի սնուցմամբ և բարձր լարման պաշտպանությամբ: Հոսանքի մալուխը << տարածքում գործող ստանդարտներին համապատասխան:		
	3. MultiFunction	**5**	**725,000**
	Սև ու սպիտակ լազերային Բազմաֆունկցիոնալ սարք: Ֆունկցիաներ՝ Տպիչ, սկան և պատճեն: Ներկառուցված հիշողություն (ROM) 64MB, արտադրողականությունը առնվազն 8000 էջ ամիս, թղթի մատակարարման սկուտեղ 150 էջ: Տպիչի ֆունկցիաները՝ տպման արագություն՝ 18 էջ/ րոպ. (A4), տպելու որակը՝ առնվազն 1200 x 600 կետ դյույմի վրա, բարձր որակի ռեժիմում տպման խտություն՝ 600 x 400 կետ դյույմի վրա, առաջին էջի տպելու ժամանկը՝ 7,8 վ., տպիչի լեզուն՝ UFRII-LT., դաշտ՝ 5 մմ վերևի, 6 մմ ներքևի, 5 մմ ձախ եւ աջ դաշտերում: Պատճենահանման ֆունկցիաները՝ պատճենահանման արագություն՝ առնվազն 18 էջ / րոպ(A4), առաջին		

	պատճենեի պատճենահանման ժամանակը՝ 12 վայրկյան, պատճենահանման խտություն ՝ առնվազն 600 x 600 կետ դյույմի վրա., թվաքանակը օրինակով՝ մինչեւ 9 տպաքանակ, խոշորացում 50-200% խոշորացման քայլը 1% : Սկաներ՝ տեսակը՝ գունավոր, սկանավորման որակը՝ օտիկական մինչեւ 600 x 600 կետ դյույմի վրա, բարձր որակի դեպքում՝ 9600 x 9600 կետ դյույմի վրա, գունավոր սկանի խորությունը՝ 24 բիտ/24 բիտ (մուտք /ելք), համատեղելիություն՝ TWAIN, WIA, արդյունավետ սկանավորման Լայնությունը՝ 216 մմ: Աշխատանքը թղթի հետ, տեսակները՝ սովորական թուղթ, հաստ թուղթ, վերամշակված թուղթ, թափանցիկ ժապավեն, պիտակներ տպելու համար թուղթ, ինդեքս քարտեր, A4, B5, A5, Ծրար (COM10, DL, B5, C5) LTR, LGL ֆորմատներ: Սնուցումը 220-240 V (± 10%), 50/60 Hz (± 2 Հg): Ներառում է քարթրիջ առանց չիպի և USB լար 1.5մ: Երաշխիք 1 տարի: Կոմպլեկտավորումը և փաթեթավորումը գործարանային, երաշխիքային սպասարկման ապահովում արտադրողի պաշտոնական սպասարկման կենտրոնում (հրավերով նախատեսված՝ առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը ներկայացնելիս տրամադրվում է նաև սպասարկման կենտրոնի տվյալները) կամ պաշտոնական մատակարարից տեղեկանք այն մասին, որ ապրանքն արտադրված է Հայաստանի Հանրապետությունն ընդգրկող տարածաշրջանում սպառման և սպասարկման համար:		
	4. Wi-Fi Router	**6**	**90,000**
	Networking Interface 10/100 Ethernet Port(1 WAN Port, 4 LAN Ports) Operating Band 2.4 GHz Wi-Fi Standards 300Mbps, 802.11 b/g/n Wireless Security WPA-PSK, WPA-Enterprise (WPA/WPA2, TKIP/AES) Հոսանքի աղբյուր 120V-240V/ 50-60Hz, wall power adapter (Scuko plug) Power cord with schuko plug		
	5. Համակարգիչ 2 (դյուրակիր համակարգիչ)	**30**	**12,000,000**
	Պրոցեսոր՝ նվազագույնը՝ Intel Core i5-11XXXX (առավելագույն հաճախությունը Turbo ռեժիմում առնվազն 4.1 GHz, 6 MB cache) օպերատիվ հիշողություն՝ նվազագույնը՝ 8GB/DDR4 – SDRAM SSD Կոշտ սկավառակ՝ նվազագույնը՝ 256 GB PCIe NVMe™ Value M.2 SSD Տեսաքարտ՝ նվազագույնը՝ Intel UHD		

	Graphics Էկրանի անկյունագիծ 15.6" diagonal, FHD (1920 x 1080), IPS, այլ առանձնահատկություններ վեբ տեսախցիկ՝ նվազագույնը՝ 720p HD Camera, առնվազն՝ 1x microSD (Supports SD, SDHC, SDXC.) ներկառուցված, առնվազն 3 հատ USB պորտ, որից 1x USB 3.1 Type-C Gen 1, 1x USB 3.1 Gen 1, 1x USB 3.0 (charging), 1x HDMI 1.4, 802.11a/b/g/n/ac (2x2) Wi-Fi and Bluetooth 5 combo, 1x RJ-45, 1x headphone/microphone combo Մարտկոցի աշխատաժամանակը՝ նվազագույնը՝ առնվազն 8 ժամ: Համակարգչային մկնիկ՝ Օպտիկական, USB, գույնը սև, նվազագույնը՝ 1000dpi, լարի երկարությունը առնվազն 1.8մ, միջին չափսի, ոչ մինի:		
	6. Պրոյեկտոր	**6**	**2,100,000**
	Aspect Ratio 16:10 native, 4:3, 16:9 support Resolution WXGA (1280x800) native Light Output (Color) Min. 3500 Lumen Colors up to 1.07 billion colours Contrast Ratio >=10000:1 Lamp Life Min. 4000h(Normal) 8000h (Economy) Interfaces VGA in, audio in and out, USB 2.0, VGA out, HDMI Պարագաներ Power cord, remote control and batteries included, Integrated speaker, HDMI cable 5m Հոսանքի աղբյուր 220V-240V/ 50-60Hz (Power cord with schuko plug)		
	7. 3D տպիչ	**2**	**900,000**
	Տեսակ Anycubic Photon Mono X 6K կամ համարժեք • LCD էկրան՝ 9,25 դյույմ մոնոխրոմ • Կառուցման տարածքի չափը՝ 197 մմ (Լ) * 122 մմ (Վտ) * 245 մմ (Հ) \ 5,9 լ • Լույսի փոխանցում՝ 6% • Կոնտրաստի հարաբերակցությունը՝ 350:1 • Լույսի աղբյուր՝ զուգահեռ դիոդային զանգված (LED x 40) • Տպման ճշգրտություն՝ 5760 x 3600 պիքսել (6K) • XY Ճշգրտություն՝ 34 մկմ • Z առանցքի դիրքավորման ճշգրտություն՝ 0,01 մմ: • Տպման արագությունը՝ մաքս. 80 մմ/ժ • Կառավարման վահանակ՝ 3,5 դյույմ TFT սենսորային էկրան • Տվյալների մուտքագրում՝ USB-A 2.0/LAN		

	•UV Cooling System - Սառեցնող սարք կայուն տպագրության Հեռակառավարման հավելված (Iphone-ի և Android-ի համար) Տպագրական գործողությունների ցանկացած խորանարդիկ հեռակառավարման հեռակառավարում, տպագրության առաջընթացի մոնիտորինգ, տպման կարգավորումների կարգավորում: • Էլեկտրամատակարարում՝ 120 Վտ • Տպիչի չափսերը՝ 47,5 x 29 x 27 սմ (HW) • Տպիչի քաշը՝ 11 կգ		
	«Շախմատ» առարկայի գույքի ցանկ		**80,000**
Շախմատի ցուցադրական խաղատախտակ՝ խաղաքարերով	Նյութը՝ պոլիէթիլենային, կտորից, գրպանիկներով, մեկ վանդակի չափսը 15*15 վրա, քաշը 450 գրամ: Արտադրող երկիրը՝ ՉԺՆ, կամ ԱՄՆ:	1	30,000
Շախմատի խաղատախտակ խաղաքարերով	Խաղադաշտը փափուկ պոլիէթիլենից, խաղաքարերը ստանդարտ չափսի, պլաստմասե, քաշը 850 գրամ: Արտադրող երկիրը Իրան:	10	50,000
	Ճաշարան		**974,100**
Չժանգոտվող պողպատից դարակ 1200*500	Չափսերը (ԵxLxԲ): 1200x500x1850mm, ձողերը պատրաստված են ներկված L-աձև պողպատից 40x40 մմ , 4 ամուր դարակները ամբողջությամբ պատրաստված են սննդի համար նախատեսված չժանգոտվող մետաղից, հաստությունը (մին 0.8մմ). Պահող շրջանակը պատրաստված է ածխածնային պողպատից, պատված է փոշի-ներկով և ապամոնտաժվող է. Դարակները ամրեցված են կարծրացուցիչով և հնարավորություն ունեն մինչև 200 կգ կգ ծանրություն տանելու: Առավելագույն թույլատրելի ծանրությունը `400 կգ: Բոլոր 4 դարակները բեռնելու դեպքում առավելագույն թույլատրելի	2	420,000

Չժանգոտվող պողպատից դարակ 900*500	Չափսերը (ԵxԼxԲ): 900x500x1850mm, ձողերը պատրաստված են ներկված Լ-աձև պողպատից 40x40 մմ , 4 ամուր դարակները ամբողջությամբ պատրաստված են սննդի համար նախատեսված չժանգոտվող մետաղից, հաստությունը (մին 0.8մմ). Պահող շրջանակը պատրաստված է ածխածնային պողպատից, պատված է փոշի-ներկով և ապամոնտաժվող է. Դարակները ամրեցված են կարծրացուցիչով և հնարավորություն ունեն մինչև 200 կգ կգ ծանրություն տանելու: Առավելագույն թույլատրելի ծանրությունը՝400 կգ: Բոլոր 4 դարակները բեռնելու դեպքում առավելագույն թույլատրելի	2	330,000
Ջերմաչափեր սենյակի	Սենյակի թվային ջերմաչափ: Տեղափոխումը և բեռնաթափումը իրականացնում է մատակարարը: Ապրանքի երաշխիքային ժամկետը՝ ապրանքն ընդունելու օրվանից սկսած առնվազն 365 օր: *Հատուկ պահանջ՝ Ապրանքը չի կարող լինել թուրքական ծագման:	20	30,000
Դույլ պլաստմասե	Դույլ հատակի լվացման համար պլաստմասա 10լ: Տեղափոխումը և բեռնաթափումը իրականացնում է մատակարարը: Ապրանքի երաշխիքային ժամկետը՝ ապրանքն ընդունելու օրվանից սկսած առնվազն 365 օր: *Հատուկ պահանջ՝ Ապրանքը չի կարող լինել թուրքական ծագման:	5	8,000
Դույլ մետաղական	Դույլ հատակի լվացման համար մետաղական 10լ: Տեղափոխումը և բեռնաթափումը իրականացնում է մատակարարը: Ապրանքի երաշխիքային ժամկետը՝ ապրանքն ընդունելու օրվանից սկսած առնվազն 365 օր: *Հատուկ պահանջ՝ Ապրանքը չի կարող լինել թուրքական ծագման:	5	11,000
Աղբարկղ, պլաստմասե	Խոհանոցի աղբաման կափարիչով ոտքով կարգավորվող 20լ: Տեղափոխումը և բեռնաթափումը իրականացնում է մատակարարը: Ապրանքի երաշխիքային ժամկետը՝ ապրանքն ընդունելու օրվանից սկսած առնվազն 365 օր: *Հատուկ պահանջ՝ Ապրանքը չի կարող լինել թուրքական ծագման:	1	4,800
Հատակ մաքրելու ձող, փայտյա	Հատակի լվացման փայտ (швабра): Տեղափոխումը և բեռնաթափումը իրականացնում է մատակարարը: Ապրանքի երաշխիքային ժամկետը՝ ապրանքն ընդունելու օրվանից սկսած առնվազն 365 օր: *Հատուկ պահանջ՝ Ապրանքը չի կարող լինել թուրքական ծագման:	2	5,500
Դույլ պլաստմասե	Դույլ հատակի ախտահանման համար 10լ: Տեղափոխումը և բեռնաթափումը իրականացնում է մատակարարը: Ապրանքի երաշխիքային ժամկետը՝ ապրանքն ընդունելու օրվանից սկսած	3	4,800

	առնվազն 365 օր: *Հատուկ պահանջ՝ Ապրանքը չի կարող լինել թուրքական ծագման:		
Անվասայլակներ	Մատուցման սայլակ 2 հարկ չժանգոտվող պողպատից, անիվներով: Տեղափոխումը և բեռնաթափումը իրականացնում է մատակարարը: Ապրանքի երաշխիքային ժամկետը՝ ապրանքն ընդունելու օրվանից սկսած առնվազն 365 օր: *Հատուկ պահանջ՝ Ապրանքը չի կարող լինել թուրքական ծագման:	2	160,000
Ընդամենը			**63,972,100**

Պետական մարմին

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011038461
ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղար՝

Գ. Սաֆարյան
(ստորագրություն)

Կ.Տ

Կազմակերպություն

«Երևանի Տ. Շնչենկոյի անվան N 42 ավագ դպրոց» ՊՈԱԿ
ք. Երևան, Մաշտոցի 5/2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900018002288
ՀՎՀՀ 02527856
Տնօրեն՝

Է. Թումանյան
(ստորագրություն)

Կ.Տ